ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների eauction.armeps.am համակարգի միջոցով գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀՔԿԴ-ԷԱՃԱՊՁԲ-ԳԿ-18/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 15.12.2018թ. ժամը 12-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Մկրտչյանը, Ա.Թումանյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

1. Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով Օլանդա ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերն և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը/ կցվում է/, ներկայացրեց իր կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները՝ eauction.armeps.am համակարգի միջոցով և թղթային /գնահատման թերթիկները կցվում են/, որի հիման վրա որոշեց՝

- Հաշվի առնելով՝ որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ –ի կողմից տրամադրված տեղեկատվությունը, ինչպես նաև առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին՝ ընթացակարգի ընտրված մասնակիցներ ճանաչել **Օլանդա ՍՊԸ -ին:**
- ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հայտարարել անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև՝10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
- Անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:
- «ՀՀՔԿԴ-ԷԱՃԱՊՁԲ-ԳԿ-18/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագրերը կնքվելու կամ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 15:00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ.Մկրտչյան

_____ Ա. Թումանյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան